ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1049-Ա/2 **«01»** հունիսի **2022 թ.**

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակում «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր» մրցույթը:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը համաձայն Հավելված N 1-ի և Հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելված N 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«01» հունիսի 2022 թ. N 1049-Ա/2 հրամանի

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն կազմակերպում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր» ՄՐՑՈՒՅԹԸ:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է irf-armenia.scs.am առցանց համակարգի միջոցով, մինչև 2022 թվականի օգոստոսի 5-ը ներառյալ (հայտի ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

Մրցույթի հրավերի փաթեթը զետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.scs.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեից՝ հեռ.՝ 010-21-01-40 (*115/*116/*102), իսկ տեխնիկական հարցերով՝ հեռ. 010- 210-140 (*108):

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն

Հավելված N 2
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«01» հունիսի 2022 թ. N 1049-Ա/2 հրամանի

ՀՐԱՎԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՐՏԵՐԿՐԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ» ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակում «Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր» մրցույթն (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2022 թվականի հունիսի 1-ի N 1049-Ա/2 հրամանի:

1.2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակում գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառների մասնագիտություններով (Հավելված 1) գիտական հետազոտությունների իրականացման համար կտրամադրի 60 ամիս տևողությամբ դրամաշնորհներ՝ 2-5 անձից բաղկացած գիտական խմբերի (այսուհետ՝ Խումբ) արտերկրի ղեկավարի (այսուհետ՝ Խմբի ղեկավար) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված գիտական թեմաներին (այսուհետ՝ Թեմա):

1.3. Հայտը չի քննարկվում, եթե՝

- չի պարունակում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը,
- չի բավարարում Մրցույթի հրավերի պայմանները,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների,
- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված այլ թեմայի/ծրագրի հետ:

1.4. Մտավոր սեփականության հեղինակային կամ արտոնագրային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև Հաշվետվություն ներկայացնելու դեպքում

Խմբի ղեկավարը պետք է առաջնորդվի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դրույթներով:

1.5. Թեմայի շրջանակում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին.

- *Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝____):*
- *Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА (Научный проект № ____).*
- *This work was supported by the Science Committee of RA (Research project № _____).*

Համապատասխան նշման բացակայության դեպքում հրապարակումը չի համարվելու Թեմայի արդյունք, հետևաբար՝ չի ընդունվելու Հաշվետվության մեջ:

1.6. Թեմայի իրականացման ընթացքում, յուրաքանչյուր 12, 24 և 48 ամիսները լրանալուց հետո, Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (տարեկան) Հաշվետվություն, որի հիման վրա Մասնագիտական փորձագիտական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) տալիս է եզրակացություն՝ Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին:

1.7. Թեմայի իրականացման 35 ամիսը լրանալուց հետո, Կոմիտե է ներկայացվում եռամյա Հաշվետվություն՝ ներառելով Թեմայի ակնկալվող միջանկյալ արդյունքները, որոնց հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Թեմայի ֆինանսավորումը ևս 24 ամիս շարունակելու նպատակահարմարության մասին:

1.8. Թեմայի իրականացման ընթացքում Կոմիտեն կարող է իրականացնել Թեմայի մշտադիտարկում և արդյունքները ներկայացնել Խորհրդին:

1.9. Թեմայի ֆինանսավորումը շարունակելու նպատակահարմարության մասին եզրակացություն տալիս՝ Խորհուրդը պետք է հաշվի առնի մշտադիտարկման արդյունքները:

1.10. Թեմայի իրականացման 60-րդ ամիսը լրանալուց հետո Կոմիտե է ներկայացվում Ամփոփիչ հաշվետվություն, որի հիման վրա Խորհուրդը տալիս է եզրակացություն՝ Հաշվետվությունն ընդունելու մասին:

1.11. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Թեմայի անոտացիան և Հաշվետվությունը հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Խմբի Ղեկավարին ներկայացվող պահանջները

2.1. Խմբի ղեկավարը պետք է տեղափոխվի և Թեմայի իրականացման ողջ ընթացքում բնակվի Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Խմբի ղեկավար չի կարող լինել սույն Մրցույթի հրապարակմանը նախորդող 4 տարիների ընթացքում հանրագումարային 12 ամիս և ավելի Հայաստանի Հանրապետությունում ուսումնառած կամ աշխատած անձը:

2.3. Խմբի ղեկավար կարող է լինել 1972 թվականի հունվարի 1-ից հետո ծնված այն անձը, որ գիտական աստիճանը ստացել է՝

- ✓Շեմ 1՝ 2015 թվականի հունվարի 1-ից հետո,
- ✓Շեմ 2՝ 2002 թվականի հունվարի 1-ից հետո:

2.4. Խմբի ղեկավարը պետք է ունենա գիտական գործունեության արժեքավոր ձեռքբերումներ և ներկայացնի հավակնոտ, խոստումնալից և իրագործելի գիտական նախագիծ:

2.5. Խմբի ղեկավարը պատասխանատու է Խմբի ձևավորման համար և հանդես է գալիս Խմբի անունից:

3. Խմբին ներկայացվող պահանջները

3.1. Թեմայի իրականացման ողջ ընթացքում Խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ կամ ռեզիդենտներ:

3.2. Խմբում պետք է ընդգրկվի՝

- առնվազն 3 կատարող (ներառյալ Խմբի ղեկավարը)՝ Հավելված 1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության *1 - 4* բնագավառների համար,
- առնվազն 2 կատարող (ներառյալ Խմբի ղեկավարը)՝ Հավելված 1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության *5 - 6* բնագավառների համար:

3.3. Կատարողները կարող են լինել ինչպես Հայաստանի Հանրապետությունից, այնպես էլ արտերկրից:

3.4. Խմբի անդամներից առնվազն երկուսը (ներառյալ Խմբի ղեկավարը) պետք է ծնված լինեն 1987 թվականի հունվարի 1-ից հետո և կարող են լինել բուհի առնվազն երրորդ կուրսի ուսանողներ:

Նշված տարիքային շեմը կարող է ավելանալ՝

- ՀՀ զինված ուժերում ծառայած լինելու դեպքում՝ հավելյալ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար հավելյալ 1 տարով:

3.5. Խմբի մյուս անդամները պետք է լինեն առնվազն մագիստրատուրայի ուսանողներ կամ դիպլոմավորված մասնագետներ:

3.6. Խումբը պետք է ունենա արտերկրի գործընկեր (Foreign Partner/Collaborator) (այսուհետ՝ Գործընկեր): Գործընկեր կարող է լինել այն անձը, որ

- ունի գիտական աստիճան,
- համապատասխան մասնագիտությամբ աշխատում է օտարերկրյա գիտական կազմակերպությունում:

3.7. Գործընկերոջ Հիրշի **ի**նդեքսը (h-index)՝ ըստ «Scopus» (https://www.scopus.com/freelookup/form/author.uri) գիտատեղեկատվական շտեմարանի տվյալների, Հավելված 1-ում ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության 1-4 բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար պետք է լինի առնվազն *10*, իսկ 5-6 բնագավառների համապատասխան մասնագիտություններով իրականացվելիք Թեմաների համար՝ առնվազն *3*:

3.8. Գործընկերը չի հանդիսանում Թեմայի կատարող և վերջինիս համար աշխատանքի վարձատրություն չի նախատեսվում:

3.9. Շեմ 1-ի դեպքում Խումբը պետք է ունենա նաև Խորհրդատու: Վերջինս կարող է լինել ինչպես Հայաստանի Հանրապետության ընդունող կազմակերպությունից (այսուհետ՝ Կազմակերպություն), այնպես էլ Հայաստանի Հանրապետության կամ արտերկրի այլ կազմակերպությունից: Խորհրդատուն չի հանդիսանում Թեմայի կատարող և Խորհրդատուի համար աշխատանքի վարձատրություն չի նախատեսվում:

3.10. Գործընկերը, իսկ Շեմ 1-ի դեպքում նաև Խորհրդատուն, մինչև **2022 թվականի օգոստոսի 5-ը** ներառյալ, Խմբի ղեկավարին է տրամադրում իր ինքնակենսագրությունը (CV) և հաստատող նամակը (Letter of Confirmation), որով հավաստում է, որ ծանոթ է Թեմայի բովանդակությանը, համաձայն է մասնակցել հետազոտական աշխատանքներին և ծանոթ է իր գործառույթների շրջանակին, ինչպես նաև նախատեսվող համատեղ միջոցառումներին (գիտափորձեր, քննարկումներ, սեմինարներ և այլն):

3.11. Թեմայի իրականացման ողջ ժամանակահատվածում (60-ամսյա կտրվածքով) Գործընկերը, իսկ Շեմ 1-ի դեպքում նաև Խորհրդատուն, պետք է առնվազն 15 օր գտնվեն Հայաստանի Հանրապետությունում և առնվազն 15 օր իրենց ներկայացրած գիտական կազմակերպությունում ընդունեն Խմբի անդամ(ներ)ին:

3.12. Խմբի անդամները (ներառյալ ղեկավարը) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում, ինչպես նաև չեն կարող հանդիսանալ «Առաջատար հետազոտությունների աջակցության», «Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների

(բաժինների) ամրապնդմանն աջակցության» «Գիտական խմբերի մեկնարկի» և «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդման» մրցույթների շահառուներ:

4. Ընդունող կազմակերպությանը ներկայացվող պահանջները

4.1. Ընդունող Կազմակերպություն (այսուհետ՝ Կազմակերպություն) կարող է լինել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագիր իրականացնող կազմակերպությունը:

4.2. Կազմակերպությունն աջակցում է դրամաշնորհային ծրագրի իրականացմանը:

4.3. Կազմակերպությունը Թեմայի ղեկավարի հետ կնքում է առնվազն Թեմայի կատարման ողջ ընթացքի համար լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատանքային պայմանագիր՝ վերջինիս գործունեության կազմակերպման նպատակով:

4.4. Կազմակերպությունը հասանելիություն է ապահովում առկա ենթակառուցվածքներին և սարքավորումներին:

4.5. Թեմայի իրականացման ողջ ընթացքում Խմբի ղեկավարին ֆինանսական և վարչական հարցերում աջակցություն ցուցաբերելու համար Կազմակերպությունը նշանակում է պատասխանատու անձ:

4.6. Նախահաշվի «Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսվում է Կազմակերպության ղեկավարի իրավասությանը թողնված գումար, որով Կազմակերպության ղեկավարը ապահովում է Թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ:

4.7. Կազմակերպությունը մինչև 2022 թվականի օգոստոսի 5-ը Խմբի ղեկավարին է տրամադրում Կազմակերպության (բուհի ֆակուլտետի) գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը (Board Conclusion), որտեղ պետք է նշվի, թե որքանով է Թեման հավակնոտ, խոստումնալից և իրագործելի և որքանով է տվյալ Թեմայի կատարումը համապատասխանում Կազմակերպության գիտական ուղղություններին:

4.8. Թեմայի իրականացման համար ձեռքբերված սարքերը, նյութերը և ծառայությունները ներառվում են Կազմակերպության հաշվեկշռում՝ հետագայում կանոնադրական նպատակներով օգտագործելու (գիտական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման) համար:

4.9. Շեմ 2-ի դեպքում՝ մինչև Թեմայի կատարման 24 ամիսը լրանալը Խմբի ղեկավարի առաջնորդությամբ և Թեմայի կատարողների ընդգրկմամբ Կազմակերպությունում ձևավորվում է նոր գիտական խումբ, լաբորատորիա կամ բաժին:

5. Ակնկալվող արդյունքները

5.1. Թեմայի կատարման 35-րդ ամիսը լրանալուց հետո Խմբի անդամները տվյալ Թեմայի շրջանակում պետք է ունենան Մրցույթի հրավերի «1.5.» ենթակետով սահմանված նշումով.

5.1.1. Հավելված 1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «*1-5*» բնագավառների համապատասխան մասնագիտություններով առնվազն երեք գիտական հոդված միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (այսուհետ՝ ՄԳՇ) («Science Citation Index Expanded (SCIE)», «Social Sciences Citation Index (SSCI)», «Emerging Sources Citation Index (ESCI)», «Arts&Humanities Citation Index (AHCI)», «Scimago Journal & Country Ranking (SJR, https://www.scimagojr.com/journalrank.php պորտալում)՝ առնվազն Q3 քառորդում կամ Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրապարակված առնվազն երեք գրքի գլուխ կամ հոդված ժողովածուում:

5.1.2. կամ մեկ՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալ ունեցող մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ հրատարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի *(Book Citation Index)* հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում (այսուհետ՝ Մենագրություն): Մեկ մենագրությունը համարժեք է ՄԳՇ ընդգրկված չորս հրապարակման:

5.1.3. Հավելված 1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «*6*» բնագավառի համապատասխան մասնագիտություններով՝

- առնվազն երկու գիտական հրապարակում ՄԳՇ ընդգրկված պարբերականներում,
- կամ մեկ Մենագրություն:

5.2. Թեմայի ավարտից հետո (60 ամսվա կտրվածքով) Խմբի անդամները տվյալ Թեմայի շրջանակում պետք է ունենան Մրցույթի հրավերի «1.5.» ենթակետով սահմանված նշումով՝

5.2.1. Հավելված 1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «*1-5*» բնագավառների համապատասխան մասնագիտություններով՝ առնվազն տասը գիտական հրապարակում ՄԳՇ ընդգրկված պարբերականներում, որոնցից առնվազն երկուսը՝ Q1 և առնվազն երկուսը՝ Q2 քառորդներում ընդգրկված ամսագրերում:

5.2.2. Հավելված 1-ով ներկայացված գիտական և գիտատեխնիկական գործունեության «*6*» բնագավառի համապատասխան մասնագիտություններով՝

- առնվազն վեց գիտական հրապարակում ՄԳՇ ընդգրկված պարբերականներում, որոնցից առնվազն մեկը՝ Q1 և առնվազն մեկը՝ Q2 քառորդներում ընդգրկված ամսագրերում,

- կամ մեկ Մենագրություն:

5.3. Որպես Թեմայի արդյունք ներկայացված գիտական հրապարակումներից առնվազն կեսում նշված հեղինակների ցանկում Խմբի ղեկավարը պետք է լինի կամ առաջին կամ վերջին դիրքում կամ նամակագրություն վարող (corresponding author) կամ ունենա որևէ համարժեք նշում:

5.4. Թեմայի կատարման արդյունքում ակնկալվում է 25 000.0 հազար ՀՀ դրամը գերազանցող միջազգային գիտական դրամաշնորհի առնվազն մեկ դիմում (submitted grant):

5.5. «5.2.» ենթակետում նշված պայմանը չկատարելը/կատարելը կանդրադառնա հետագայում Կոմիտեի հայտարարած մրցույթներին Խմբի անդամների կողմից ներկայացվելիք հայտի փորձագիտական գնահատականի վրա՝ դրանից հանելով/գումարելով տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի 5 տոկոսի չափով միավոր՝ Խմբի ղեկավարի ընդգրկված լինելու դեպքում և 1 տոկոսի չափով միավոր՝ Թեմայի կատարողներից յուրաքանչյուրի դեպքում: Հանրագումարում կհանվի/կգումարվի տվյալ մրցույթում հայտի առավելագույն գնահատականի ոչ ավելի, քան՝ 5 տոկոսի չափով միավոր: Հետագա մրցույթներին Խմբի անդամների կողմից ներկայացված հայտի փորձագիտական գնահատականի նվազեցումը կչեղարկվի Թեմայի ավարտից հետո Կոմիտե ներկայացվող ամփոփիչ Հաշվետվությունն ընդունելու մասին Խորհրդի եզրակացության հիման վրա:

5.6. Թեմայի իրականացման ընթացքում Խմբի անդամները պետք է ապահովեն Թեմայի և/կամ գիտության տվյալ բնագավառի վերաբերյալ գիտահանրամատչելի նյութերի ստեղծում և տարածում (հարցազրույցներ, հրապարակումներ գիտահանրամատչելի ամսագրերում, տեսանյութերի ստեղծում և տարածում, լայն լսարանի համար քննարկումների կազմակերպում և այլն), որոնք հաշվի կառնվեն Խորհրդի կողմից ամփոփիչ Հաշվետվությունն ընդունելու մասին եզրակացություն տալիս:

5.7. Որպես Թեմայի արդյունք ներկայացված գիտական հրապարակումներում պետք է նշվի Կազմակերպությունը (affiliation):

6. Հայտի լրացման և ներկայացման կարգը

6.1. Հայտը լրացնում և ներկայացնում է Խմբի ղեկավարը՝ irf-armenia.scs.am առցանց համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 5-ը ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունն արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

6.2. Աշխատանքի վարձատրության առավելագույն չափը 12-ամսվա կտրվածքով նախատեսել.

- Շեմ 1՝ Խմբի ղեկավարի համար ամսական առավելագույնը 400.0 հազար դրամ, իսկ կատարողների միջին ամսական վարձատրությունը 250.0 հազար ՀՀ դրամ:
- Շեմ 2՝ Խմբի ղեկավարի համար ամսական առավելագույնը 600.0 հազար դրամ, իսկ կատարողների միջին ամսական վարձատրությունը 300.0 հազար դրամ:

6.3. Ընտանիքի անդամների հետ Հայաստանի Հանրապետություն տեղափոխվելու դեպքում՝ Խմբի ղեկավարի աշխատանքի վարձատրության չափը, հետևաբար նաև Թեմայի ֆինանսավորման աշխատանքի վարձատրության առավելագույն չափը 12-ամսյա կտրվածքով լրացուցիչ կարող է աճել 1800.0 հազար դրամի չափով:

6.4. «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» և «Գործուղումներ» ենթահոդվածներով գումարային 12-ամսվա կտրվածքով կարելի է նախատեսել առավելագույնը 3000.0 հազար դրամ, որը կարող է ավելանալ «Աշխատանքի վարձատրություն» հոդվածում առավելագույն չափից պակաս նախատեսելու դեպքում:

6.5. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Սարքեր, նյութեր և ծառայություններ» ենթահոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման և/կամ ծառայությունների ծախսեր:

6.6. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Գործուղումներ» ենթահոդվածով նախատեսվող գումարը կարող է օգտագործվել Թեմայի ընթացքի ու արդյունքների ներկայացման նպատակով միջազգային գիտաժողովներին մասնակցության համար, ինչպես նաև Գործընկերոջ կամ արտերկրի Խորհրդատուի և Խմբի անդամների փոխադարձ այցելությունների գործուղման ծախսերը հոգալու համար:

6.7. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Խմբի կամ լաբորատորիայի ամրապնդում» ենթահոդվածով առաջին 12-ամսվա համար լրացուցիչ կարող է հայցվել 3000.0 հազար դրամ (Շեմ 1) և 10000.0 հազար դրամ (Շեմ 2), որը կարող է օգտագործվել խմբի կամ լաբորատորիայի ենթակառուցվածքի բարելավման ուղղությամբ և Թեմայի կատարման համար անհրաժեշտ այլ ծախսերի համար:

6.8. Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածի «Փորձարարական հետազոտություններ» ենթահոդվածով լրացուցիչ 20000.0 հազար դրամ (Շեմ 1-ի դեպքում) և 40000.0 հազար դրամ (Շեմ 2-ի դեպքում) կարող է հայցվել փորձարարական հետազոտություններ նախատեսող թեմաների համար, որը կարող է նախատեսվել գիտական սարքավորումների և նյութերի ձեռքբերման, խոշոր ենթակառուցվածքներին հասանելիություն ստանալու և Թեմայի բնույթով

պայմանավորված այլ ծախսերի համար: Գիտական սարքերի և սարքավորումների ձեռք բերումը չի կարող նախատեսվել Թեմայի իրականացման վերջին տարում:

6.9. Նախահաշվով նախատեսված բոլոր ծախսերը անհրաժեշտ է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

6.10. Վերադիր ծախսերը (60 ամսվա համար) չպետք է գերազանցեն 2500.0 հազար դրամը:

6.11. Նախահաշվի հիմնավորվածությունը և բաշխումը կարող է քննարկվել Խորհրդի և Խմբի ղեկավարի հետ և կարող է վերանայվել փոխադարձ համաձայնությամբ:

6.12. Թեմայի իրականացման ընթացքում (ոչ շուտ քան 12 ամիս անց) Խմբի ղեկավարը կարող է դիմել Կոմիտե՝ Թեմայի կատարողների թիվը Թեմային առնչվող մասնագիտություն ունեցող առավելագույնը 2՝ մինչև 35 տարեկան կատարողներով ավելացնելու առաջարկով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում:

6.13. Թեմայի կատարողների թիվն ավելանալու պարագայում Խմբի ղեկավարի և Կոմիտեի միջև կնքված պայմանագրի գինն ավելանում է յուրաքանչյուր նոր կատարողի համար մինչև 1 800.0 հազար դրամով (12 ամսվա կտրվածքով):

6.14. Գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի, բայց ոչ ավելի, քան՝ ամսական 1500 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12-ամսյա կտրվածքով):

7. Հայտերի գիտական փորձաքննությունը

7.1. Մրցույթի պայմանները բավարարող Հայտերը տրամադրվում են Խորհրդին՝ գիտական փորձաքննությունն իրականացնելու համար:

7.2. Գիտական փորձաքննության և հարցազրույցի ընթացքում գնահատվում են Թեմայի արդի վիճակը, նորույթը, հեռանկարայնությունը, իրականացման նախադրյալները, ազդեցությունը ոլորտի զարգացման վրա, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների հիմնավորվածությունը, համագործակցության նպատակահարմարությունը, գիտական արդյունքների տնօրինումը և տարածումը, Նախահաշվի հիմնավորվածությունը, միջգիտակարգային առնչությունները, Խմբի ղեկավարի, կատարողների, Գործընկերոջ և Շեմ 1-ի դեպքում՝ նաև Խորհրդատուի մասնագիտական համապատասխանությունը Թեմային և

որակավորումը, Կազմակերպության համապատասխանությունը, ինչպես նաև Մրցույթի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

7.3. Խորհուրդը կքննարկի Բեալի ցանկերում (Beall's list, https://beallslist.net/) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում կամ պարբերականներում հրատարակված աշխատություն ներկայացրած Հայտը գիտական փորձաքննության ենթարկելու հարցը:

7.4. Խորհուրդը Կոմիտեի հետ համատեղ մշակում և հաստատում է Հայտերի գիտական փորձաքննության և հարցազրույցի վարման կարգը և գնահատման թերթիկները:

7.5. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն երկու փորձագետի կողմից: Որպես փորձագետ կարող են հանդես գալ նաև Խորհրդի անդամները: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը:

7.6. Խորհուրդը, անհրաժեշտության դեպքում, գիտական փորձաքննության նպատակով կարող է ներգրավել փորձագետներ:

7.7. Խորհուրդը Խմբի ղեկավարի հետ անցկացնում է հարցազրույց:

7.8. Գիտական փորձաքննության ժամանակ փորձագետի առավելագույն գնահատականը կազմում է Հայտի առավելագույն գնահատականի 50 տոկոսը:

7.9. Հարցազրույցի առավելագույն գնահատականը կազմում է Հայտի առավելագույն գնահատականի **50** տոկոսը:

7.10. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և հարցազրույցի գնահատականների միջին թվաբանականի գումարն է:

7.11. Երկու փորձագետների գնահատականները փորձագետի առավելագույն գնահատականի 30 և ավելի տոկոսով տարբերվելու դեպքում Հայտը տրվում է երրորդ փորձագետին: Այդ դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների՝ երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Երեք փորձագետների գնահատականի հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

7.12. Կոմիտեի և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

7.13. Գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով Հավելված 1-ի յուրաքանչյուր բաժնի համար ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում Խորհրդին՝ քննարկման:

7.14. Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

7.15. Կոմիտեն, ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121 – Ն որոշմամբ հաստատված «Պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների» ուղղությամբ նախատեսված ծավալներից, որոշում է շեմային գնահատականը և Նախարարին է ներկայացնում «Ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսված ֆինանսավորման չափը հաստատելու մասին» հրամանի նախագիծ:

7.16. Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է Կազմակերպությունում իրականացվելիք ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը, ղեկավարների և կատարողների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսված ֆինանսավորման չափը:

8. Այլ դրույթներ

8.1. Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի և Կազմակերպության միջև կնքվում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր: Միևնույն ժամանակ Կոմիտե են ներկայացվում Թեմայի ղեկավարի և Կազմակերպության միջև կնքված «Ծառայությունների մատուցման մասին» պայմանագրի և կատարողների հետ կնքված պայմանագրերի պատճենները:

8.2. Խմբի ղեկավարը կարող է դիմել Կոմիտե՝ համարժեք փոփոխություն կատարելու՝ ըստ տարիքային խմբի և գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշի, կամ Խմբի անդամների թիվը մեկով կրճատելու միջնորդությամբ՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորում: Խմբի անդամների թվի կրճատման դեպքում Խմբի ղեկավարի և Կոմիտեի միջև կնքվում է պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

Հավելված 1

Fields of Science and Technology Classification

1. NATURAL SCIENCES

1.1 Mathematics

1.2 Informatics and Computer Sciences

1.3 Physics and Astronomy

1.4 Chemistry

1.5 Earth and Environmental Sciences

1.6 Biological Sciences

2. ENGINEERING AND TECHNOLOGY

2.1 Urban Planning and Architecture

2.2 Electrical Engineering and Information Technology

2.3 Mechanics

2.4 Mechanical Engineering and Machine Building

2.5 Chemical Technology

2.6 Materials Science

2.7 Medical Devices

2.8 Ecology

2.9 Biotechnology

2.10 Nanotechnology

3. MEDICAL SCIENCES

3.1 General Medicine

3.2 Clinical Medicine

3.3 Medical Biotechnology

4. AGRICULTURAL SCIENCES

4.1 Cattle breeding, Veterinary Medicine

4.2 Crop Production

4.3 Soil Science, Agro-Chemistry, Plant Protection

4.4 Agricultural Biotechnology

5. SOCIAL SCIENCES

5.1 Psychology

5.2 Economics and Business

5.3 Pedagogical Sciences

5.4 Sociology

5.5 Law

5.6 Political Sciences

5.7 Socio-Economic Geography

5.8 Mass Media and Communication

6. ARMENOLOGY AND HUMANITIES

6.1 History, Archaeology

6.2 Linguistics, Literary Studies

6.3 Philosophy, Ethics

6.4 Theology

6.5 Arts

Հավելված 2

To: Sargis Hayotsyan
Chairman of the RA Science Committee

From _____

(Name, Surname, Patronymic name, Middle name)

(postal address)

(Email address Phone number)

Application Letter

I herewith submit the package of the application for the project proposal entitled ------- to be considered in the frames of the Call for Incoming Research Fellowship Programme - Armenia, launched by the RA Science Committee.

Head of Group՝_____ (_____)
(signature) *(Name, Surname)*

«____» _____ 2022 թ.

Հավելված 3

Project

Submit in English, up to 12 pages, including graphs, tables, images and references..

1. ***Annotation***

2. ***Review on the Current State of Knowledge about the Research Problem***

3. ***Project Aims and Objectives***

4. ***Research Project***

5. ***Means of Implementation; Methods***

6. ***Calendar Plan (by quarters)***

7. ***Interdisciplinarity***

8. ***Team's Achievements in the Mentioned Field (availability and necessity of material resources), Appropriateness of the Foreign Partner (for level 1 also that of the Advisor) and Expected Results***

9. ***Team's Development Prospects (risks and opportunities)***

10. ***Quantitative and Qualitative Indicators of the Expected Results (publications, conferences, use of innovative capacity (technological investment, demonstration, sample,prototype, etc), management of intellectual property (patent, copyright, etc))***

11. ***References***